ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2021թ. հոկտեմբերի 23-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. **09/10/21թ. «Արարատ-Արմենիա-04»-«Միկա-04» (18A020) խաղին. «Արարատ-Արմենիա-04» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Հովհաննիսյանի (N28606) հեռացման մասին (հայհոյելու համար):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-04» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Հովհաննիսյանի (N 28606) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետով՝ «Արարատ-Արմենիա-04» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Հովհաննիսյանին (N 28606) որակազրկել 2 խաղով և «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

---

2. **17/10/21թ. «Նիկարմ-08»-«Օնոր Ակադեմիա-08» (14B009) խաղին. «Նիկարմ-08» թիմի մարզիչ Արմեն Խաչատրյանի (N3131) հեռացման մասին (մրցավարական անձնակազմին վիրավորելու համար):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Նիկարմ-08» թիմի մարզիչ Արմեն Խաչատրյանի (N 3131) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 28-րդ կետով՝ «Նիկարմ-08» թիմի մարզիչ Արմեն Խաչատրյանին (N3131) որակազրկել 2 խաղով և «Նիկարմ» ՖԱ ՍՊԸ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

---

3. **19/10/21թ. «Ակադեմիա-06»-«Անդրանիկ ՖԱ-05» (17A028) խաղին. «Անդրանիկ ՖԱ-05» թիմի մ/պ մարզիչ Նարեկ Դավթյանի (N 5205) հեռացման մասին (հակառակորդ թիմի մարզիչին վիրավորելու համար):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Անդրանիկ ՖԱ-05» թիմի մ/պ մարզիչ Նարեկ Դավթյանի (N 5205) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետով՝ «Անդրանիկ ՖԱ-05» թիմի մ/պ մարզիչ Նարեկ Դավթյանին (N 5205) որակազրկել 3 խաղով և «Անդրանիկ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

---

4. **19/10/21թ. «Ակադեմիա-06»-«Անդրանիկ ՖԱ-05» (17A028) խաղին. «Ակադեմիա-06» թիմի ֆուտբոլիստ Էդգար Ղևոնդյանի (N 41535) հեռացման մասին (մրցակցին հայհոյելու համար)**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Ակադեմիա-06» թիմի ֆուտբոլիստ Էդգար Ղևոնդյանի (N 41535) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետով՝ «Ակադեմիա-06» թիմի ֆուտբոլիստ Էդգար Ղևոնդյանին (N 41535) որակազրկել 2 խաղով և «ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

---

5. **19/10/21թ. «Ակադեմիա-06»-«Անդրանիկ ՖԱ-05» (17A028) խաղին. «Անդրանիկ ՖԱ-05» թիմի ֆուտբոլիստ Խաչիկ Մուրադյանի (N 32226) հեռացման մասին (մրցակցին հայհոյելու համար)**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Անդրանիկ ՖԱ-05» թիմի ֆուտբոլիստ Խաչիկ Մուրադյանի (N 32226) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետով՝ «Անդրանիկ ՖԱ-05» թիմի ֆուտբոլիստ Խաչիկ Մուրադյանի (N 32226) որակազրկել 2 խաղով և «Անդրանիկ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

---

6. **20/10/21թ. «Վաչիկ-05»-«Ալաշկերտ-05» (17C1001) խաղին. «Ալաշկերտ-05» թիմի ֆուտբոլիստ Արտավազդ Մարտիրոսյանի (N 30901) հեռացման մասին (Բռնարարք)**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ-05» թիմի ֆուտբոլիստ Արտավազդ Մարտիրոսյանի (N 30901) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Ալաշկերտ-05» թիմի ֆուտբոլիստ Արտավազդ Մարտիրոսյանին (N 30901) որակազրկել 3 խաղով և «Ալաշկերտ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի՝ 7.000 ՀՀ դրամի չափով:

---

7. **20/10/21թ. «Վաչիկ-05»-«Ալաշկերտ-05» (17C1001) խաղին. «Վաչիկ-05» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Աթաբեկյանի (N 37846) հեռացման մասին (Բռնարարք)**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել խաղին «Վաչիկ-05» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Աթաբեկյանի (N 37846) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Վաչիկ-05» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Աթաբեկյանին (N 37846) որակազրկել 3 խաղով և «Վաղարշակ /Վաչիկ/ Տիգրանի Ղալթախչյան ՖԱ ՀԿ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի՝ 7.000 ՀՀ դրամի չափով:

---

8. **15/10/21թ. «Նոա»-«Սևան» (ՊԼ044) խաղի վերաբերյալ. Խաղի ավարտից հետո տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ.**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Ղեկավարվելով Կանոնակարգի 12-րդ հոդվածի 12.01 և 12.04-րդ կետով՝ հարուցել կարգապահական վարույթ և ձեռնարկել դրանից բխող անհրաժեշտ գործողություններ:

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Անդամ և քարտուղար՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Տիգրան Իսրաելյան

<u>Հիշեցում՝</u>

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն

կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:
25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամաբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: